

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
**Ե. ԹՕՐՕՍՅԱՆ**  
 ՆԱՄԱԿ ԽԱՐ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹԻՒՆ  
 ԿԵՏՔ Ե ՈՒՂՂՆԱԿ ԱՌ  
 ՏՏՕՐԻՔ ԱՐՇԱՆՈՅՍ Իրագրի  
 ԳԱԶԻՐԷ (փոքր սէրափ)

# ԱՐՁԱՅԻՆ

**E. TOROSSIAN**  
 Direc.-propr. du journal arménien  
**ARCHALOUICE**  
 LE CAIRE (Égypte)  
 Poste-restante

## ԼՐԱԳԻՐ

### ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

#### ՔԱՏԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՏՈՒՆ ԶԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահլիճ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԳՐԱԳՐՈՐ	
Տարեկան, Թրանկ	20
Վեցամսեայ	12

ՔԱՏԱՆՈՐԳԱԳՐԻՆ ԿԱՆԵԿ Ե  
 ԵՒ ԹՂՕՄԱՆԻ ԾԱԽԷ  
 ԽՈՐԱԳՐՈՒԹԻԱՆ ԱՐԱՅ՝

ԽՈՐԱԳՐՈՒԹԻԱՆ ՈւՂՂՈՒՄԸ  
 ԳՐՈՒՅԵՆՔ ԵՆՆԻՆ ՏՐԱԽԷ:

ԱԶԳԱՐՈՒԹԻՒՆԷ  
 Կանխիկ վճարել են

## ՄԵԾ ԶԱՐԱԹՐ

Ո՛չ Ռոսիայի զորավարին վերջին յա-  
 ղողութիւնը՝ որ միևնոյն ատեն առաջինն  
 է՝ և ոչ ալ նուրեանի մահն է որ մեծ  
 ածականը տալ կուտայ ինձի այն շարժումն  
 որ այսօր կը վերջանայ և

Փերագրապէս ազգային և հայրենա-  
 սիրական տեսակէտով սուրբ և փառաւոր  
 և ծիծեռակը՝ Կրտսէ մէջ տօնեցինք Մեծին  
 Ազգայնայ յիշատակը, մեր վիճակին աւելի  
 յարակից և մեր հոգւոյն աւելի սիրելի  
 պարագաներուն վրայ մտածել կուտայ  
 մեզի այս պահուստ՝ քան Ալպիոսի յաղթանակը  
 և երբեմնի հայ վարչապետին մահուան  
 վրայ իր անտարբեր կը թողու զմեզ:

Հազար և երեսունը մեջ նահանգներ  
 ըստ յիշատակը որ կամաց կամաց կ'ա-  
 ըրուի դարերու օրոնցին տակ, միթէ ամեն  
 ճշմարիտ հայու սրտին մէջ չ'աբխեցներ  
 զբացում մը սուրբ և նուիրական և միևնոյն  
 ատեն զգացնել չի՞ տար պարտականու-  
 թիւն մը մարդասիրական և ազնիւ, չի մոռ-  
 նարու համար հասն այն հազարաւոր խեղճ որ-  
 բերը՝ թշուառներին այդ ծաղիկները և  
 աղբային մեծ սրտի մը այդ զոհերը, -  
 որոնք անխոհեմ և բազմախնայ Վարդան-  
 ներու երեսնէն, այսօր հայրենի երկիրը կը  
 շեցնեն իրենց ծիծերով և այդ պաշտելի  
 հողը կ'ողորեն իրենց աչքերուն գառն արև  
 տասուքովը:

Սիրուն, անմեղ արարածներ, որոնք ի-  
 ընց տկար ուսին վրայ կը տանին այսօր  
 այն ամեն ծանր և անտանելի հետևանք-  
 ները որ արդիւնքն են խել մը արիւն-  
 կլակ ազգային ճիւղերու և Օրբիտ-ֆոլիոյ հե-  
 ղոսներու արարքին:

Ինչ որ ալ լլուայ արգի աղէտքին պատճա-  
 ճառը՝ զոր քննադատելու և կամ խորա-  
 սուզելու և ոչ իսկ տաղտուկը են կուտամ  
 ինձի, - այսօր տխուր և սրտաճմլիկ իրո-  
 ղութիւն մը կայ, որուն հանդէպ անտար-  
 բեր կենալ ներքի չէ որեւէ Հայու:

Եւ իրաւ ալ պղտիկ մխիթարութիւն  
 մը չէ տեսնել թէ ազգը իր այս ցամ ու  
 ցիր վիճակին մէջ սրբան առատաճեռնու-  
 թեամբ և ինչ գովելի փութկոտութեամբ  
 կը նատարէ որբերու դործին և ինչ հաշ-  
 մերաշխարհեամբ կ'ուզէ ամօքը ազգային  
 այդ մեծ ցաւը որ պղտիկ որբերը կուտան  
 մեր սրտերուն:

Ամերիկայի այն ամեն անկիւններէն  
 ուր հինգ, տասը հայ կը գտնուին, տուր-  
 ներ կը դրկուին Պատրիարքարան որբերուն  
 համար, Եւրոպայի հայերը շարունակ կը  
 մասնակցին այդ նւիրածութեան, իսկ  
 ճահկաստանի մեր ազգայինները իրենց  
 կարողութեան չափով և թերեւ աւելի, ամեն  
 ժամանակ իրենց դրամական աջատ ծծան-  
 դակութեամբ կը դիւրացնեն որբայնամ  
 ընկերութիւններու գործը:

Եգիպտոսի հայերն են մինակ որ Սփիք-  
 սէն օրինակելով գողցես, անտարբեր, թող  
 և քարայած կը մեան ազգային այդ մեծ  
 շարժումին դիմաց և ոչ իսկ կը հետաքրք-  
 րուին գիտնալ թէ ի՞նչ կ'ըլլան որբերը,  
 և կամ ի՞նչ կ'ըլլուի անոնց համար:

Ներողութիւն, քիչ մնաց պիտի մոռ-  
 նայի: Հոս ալ բաներ մը ըրին. կուզէ՞ք  
 որ պատմեմ:

Ասկէց գրեթէ երկու տարի առաջ,  
 եղաւ երանելի միջոց մը ուր Փարոսի խըմ-  
 բագրականներէն ներշնչուած, քանի մը ա-  
 ռաջակարգ դիրք ունեցող Հայեր, օրուան  
 Տեղապահին նախագահութեան տակ յանձ-  
 նաժողով մը կազմեցին որբերուն ի նպատ  
 հանգանակութիւն մը ընելու համար:

Իսկ մը չէր պակտեր այդ յանձնաժո-  
 ղովին՝ Նախագահ, Ատենապետ, Ատենա-  
 դպիր, հանգերծ միջնորդ ամենքն ալ  
 քիչ չկտ փող ունեցող մարդիկ: Եթէ չեմ  
 յիշար իսկապետ անգամ տեսին, ինչ որ  
 անհրաժեշտ է ամեն յանձնաժողովի որ  
 ինքզինքը կը յարգէ, ինչիւր չէ որ մէջ տեղ  
 գրամ կայ կամ ո՛չ:

Այդ պատկառելի և երիցս երանեալ  
 յանձնաժողովը, ճշմարիտ յանձնաժողովի  
 մը պէս, նիստեր ալ ըրաւ, կը հաւատա՞ք  
 ասոր: Ասկէ աւելին կայ. ասենագրութեան  
 տետրակ մը անգամ ծախու առին Պէօմէ  
 և Անտերէրէն:

Քիչ մնաց որ մասնաւոր բարապան մըն  
 ալ պիտի ունենային: Բայց մէկալը թող  
 չի տուաւ:

Ինչպէս կը տեսնէք, ասկէ աւելի կը  
 նոնաւոր, աւելի խղճամիտ և անելի կատա-  
 ըեալ յանձնաժողով մը կարելի չէր երազել:  
 Եւ իրաւ ալ երազ մը եղաւ սոսկ:

Ինչ, կը կարծէ՞ք թէ բան մը չ'ըրաւ  
 այդ յանձնաժողովը. ինչո՞ւ աստանկ ձրի  
 զրպարտութիւն մը կ'ընէք, կ'ազգայնեմ:

Ընդհակառակը, սպասուածէն անկըն-  
 կարածէն աւելին ըրաւ:

Ազէկ մը չեմ յիշեր, ամսական 40  
 կամ 50 ոսկի մտ գումար մը ստորագրել  
 տուաւ կարող ազգայիններու, որոնք կը  
 խոստանային ամեն տարի միևնոյն գումարը  
 տալ ի նպատ որբերուն ի ձեռն այդ հո-  
 յակապ յանձնաժողովին:

Ես, անհրաժեշտ քիչ մնաց որ այդ  
 երանելիներուն երեսը օրիտի երկայնի համ-  
 բուրել, աստանկ հիմնական և նուիրական  
 բան մը ըրած ըլլալուն համար:

Եթէ տակաւին կը տարակուսիք ըսա-  
 ծիս վրայ, պրպտեցէք Փարոսի ձեր հաւա-  
 քածոն և հոն պիտի գտնէք նոյն իսկ այդ  
 յանձնաժողովին կողմէ տրուած տեղեկա-  
 գիրը սրով կը հրատարակուէր անունները  
 այն մարդասէր նուիրատուներուն՝ որ սիրա-  
 յօժար կերպով մասնակցած էին այդ ազ-  
 գային հանգանակութեան:

Եւ եղաւ որ, . . . այս, և եղաւ որ . . .  
 ահա՛ ուր կ'մկուի մտաւոր զանազան  
 Լապիշ, Օժիէ և Քայրոսն անպակ նիւթեր  
 կը փնտռէին և չէին գտնար խեղճը . . .

Արդ, կուզէք գիտնալ թէ վերջապէս  
 այդ դրամները ինչ եղան, չէ՞:

Ամեն քօմէտի երեք արարուած կու-  
 նենայ էն քիչը: Մինչև հիմայ պատմածներս  
 աղաջին արտրուածը կը կազմեն. մնացեալ  
 երկու արարուածները, յառաջիկայ շար-  
 թուն Ասանկ պղտիկ զիջում մը չէ՞ք ընե՞ր  
 ինձի՞:

Ա.

## ՄԵՐ ՊՁՏԻԿՆԵՐԸ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Բայց վերջնայն արթնութեան մտանակը  
 եկած Սգոստիմոս յիշող այն քաղաքը՝ զորս ման-  
 կութեան ատեն մօրմէն ընդունած էր, արցունք-  
 ները որոնք իրեն համար թափուած էին, ողորկեցին  
 զինք ջրհեղեղի մը նման. Կապուսի մայրը Մօսի-  
 գային եւ մանկութեան Եւրոպայի անկէ ունեցած  
 դասերուն կը պարտի երկնիցին. ՂԱ Օգոստիմոսն,  
 հայրապետաց ամենէն պերճախոսն եւ ճիւղիցա-  
 կան պատմութեան պայծառնայն ստուղը:

Մեծ փորձութեան կայսրի սրտը փառակ զը  
 չփացնելու մէջ Կապուսի ընդ ամեն բան կրտսէ  
 ներանալ իրենց անձերուն ի նպատ որբեր  
 հանդէպ: Անոնք կրտսէ ցոխալ ամեն տեսակ  
 նեղութեան բաց ի իրենց զօրակները կրթելու

եւ պատժելու ցաւէն : Անոնք հարստութիւն կը գիզեն իրենց բոլոր կենացը մէջ կրորիկ ժառանգութիւն մը թողելու իրենց կուռքին : Սակայն հազիւ թէ կը խորհին այդ հարստութեան ինչպէս գործածուելուն վրայ, իրենց մահունէն վերջ : Այս է ինչ որ պէտք է վնասակար սէր կոչել : Ծնողք կը կարծեն թէ իրենց զաւակները կը սիրեն երբ զանոնք երես կը հանեն եւ պատժելէ կը վախնան : Երբ պէտք ըլլայ անոնց կրթութեանը համար ուրիշ երկիր մը զրկել, կը հակառակին կ'ընդդիմանան : Իրենց սրտին հատորին բաժանումը եւ բացակայութիւնը անտանելի է մինչեւ իսկ եթէ այդ բաժանումը անոր օգտին համար ըլլայ : Ո՛չ, կը նախընտրեն իրենց զաւակները իրենց քով պահել, հոգ չէ որ այս բանը զիրենք տգէտ պիտի թողու եւ ապագային մէջ անոնց միայն անէծքները պիտի ընդունին :

Սողոմոն իմաստուն կ'ըսէ «Գաւազանին խրնայողն իր որդին կ'ատէ, բայց զանիկա սիրողը կանխելէ կը խրատէ» : Անոր նման է Աստուածային պատգամը : «Տէրը կը խրատէ զայն զոր կը սիրէ, եւ կը ծեծէ ամէն որդի զոր կ'ընդունին . . . քանզի ո՞ր որդի է այն, զոր հայրը չ'պատժեր» :

Այս առթիւ կուզեմ մի քանի խօսք ըսել տղաքները պատժելու կերպին նկատմամբ : Հոս ալ իմաստունին խօսքերը թելադրիչ են : Նա կ'ըսէ, մինչդեռ յոյս կայ որդիդ խրատէ եւ անոր մահունանը կամակից մի՛ ըլլար : «Հարուածներուն վէրքի նշանները չարութեան դէմ մաքրողական զեղ են» : «Տղայէն խրատը մի կարեք, վաճաղի եթէ գաւազանով ծեծես զնա, չ'մտնիր : Դուն գաւազանով կը ծեծես զնա, բայց անոր հոգին դժոխքէն կ'ազատես» : «Գաւազան եւ յանդիմանութիւն իմաստութիւն կուտան : Բայց իր կամաց ձգուած որդին իր մայրը կ'ամպշուեն» : Խրատէ քու որդիդ, որ զքեզ հանգստացնէ, եւ հոգիդ զուարճացնէ :

Մեզմէ շատերուն ծանօթ է այն սկիզբաբան, թուլամորթ, սղէտ եւ նախապաշարեալ ծնողքը, որ կը մերժէ պատժել իւր զաւակը ոեւէ պարագայի տակ : Պատուակ բռնելով թէ սէրն է կրթութեան մէջ գլխաւոր մղիչ գործը իրեն, կը ներէ իր զաւակին բոլոր յանցանքները եւ կը խնայէ զայն իր արժանի պատժէն : Ծշմարիտ սէր չէ՛ այս : Սիրոյ վարդապետութիւնը սխալ հասկցուած է :

Այս տեսակ սէրը բուժիչ արդիւնք չ'ունենար : Եղբուն մտքին մէջ ա՛յնչպիսի յիմարութիւն կայ, այնչա՛փ կամակորութիւն, ա՛յնչպիսի կիրք, ա՛յնչպիսի հպարտութիւն որ այս մոլութիւնները անկէ վանելու համար խրատի եւ պատժոյ պէտք ունի :

Ինչպէս տղաքները պատժելու մասին չափազանց մեղմ ըլլալ կարելի է, նոյնպէս ալ առանց սկզբունքի եւ յաճախ պատժելն ալ վնասակար է : Ֆիզիքական պատիժը շատ քիչ անգամ պէտք է ի գործ դրուիլ : Բնոր արդիւնքը փնտրուած ուղղութիւնը յառաջ չ'ընթերս եւ ընդհակառակը կը նուաստացնէ, կ'անասնացնէ տղան :

Պատժելու այս կերպը վրէժխնդիր զգացումներ կը յարուցանէ եւ տղուն վայրենի կիրքերը կ'արթնցունէ : Անոր սիրտը կը կարծրանայ եւ գաւազանին երկիւղը թէեւ ժամանակ մը կրնայ արգիւղ զայն յանցանք գործելէ : սակայն երբեք չ'հասնիր անոր խղճին եւ չ'բաճար անկէ յանցանք գործելու հակամիտութիւնը : Պատիժը որ չ'ընկերանար այն գործողութեան հետ որ յանցանքին գիտակցութիւնը կուտայ, բոլորովին ապարդիւն կը մնայ :

Բաց ի սակէ ֆիզիքական պատիժը տղայոց սրտին մէջ դառնութիւն յառաջ կը բերէ որ կը նուազեցունէ որդւոյն վստահութիւնը իւր հօրը վրայ եւ տակաւ առ տակաւ սիրոյ հուրը մարելով հօր եւ որդւոյ մէջ ատելութիւն կը գոյանայ :

Բայց ինչ տարբեր է այն գաղափարական վիճակը, որուն համար Աստուած օրհնած է ծնողքները զաւակներով : Տղուն ամբողջ գոյութիւնը, իր ծագմամբ եւ էութեամբ, կապեալ է ծնողքին հետ : հազարաւոր նմանութիւններ զանոնք իրարու կը կապեն : անոր զարգացման մէջ մի քայլը փոխադարձ սիրոյ անմահ սահմանուած է : անոր ամենականուխ ակնարկը կը հանդիպի իր սիրելի մօր աչքերուն : առաջին դասը զոր իր մայրը կը սորվեցնէ ճանչնալ եւ սիրել է իր հայրը : Հոս է որ երբ սրբազայրն սիրոյ, բայց երբ

այս վայրը կ'ըլլայ փոխանակ սիրոյ, ատելութեան եւ անվստահութեան տեղ մը, երբ որ սէրը, զոր անհարելի է արմատախիլ ընել, փոխանակ բնական կերպով իր ծնողաց կողմը հակելու ուրիշ առարկաներու կը դառնայ : ասոնք անբնական արդիւնքներ են զորս մեր տղայոց հետ ունեցած կոշտ վարմունքը կ'արտադրէ :

Ծնողաց այս պարտականութիւնները երբ խղճի մտօք կատարուին, լաւ սկզբունքներով եւ հաստատուն հիման վրայ կառուցուած, իրենց առատ վարձատրութիւններն ունին : Ո՛ր ծնողք չէ վայելած հաճոյքը զոր կարելի է քաղել լաւ կրթութեամբ տղաքներու հետ յարաբերութիւն ընելով : Օրուան աղմկալից ժամերն անցընելէն յետոյ, ի՞նչ հաճելի է երեկոյին տուն վերադառնալ եւ վայելել անմեղ պզտիկներու ընկերութիւնը որ մոռցընել կուտայ ամեն մտառանջութիւն, հոգ եւ անյաւոզութիւն : Գործի անվստահան հայրերէն միտքը յոգնած, շուկայի եւ գործատեղիներու Հաբիւրիդոսէն գլուխը մոլորած, մարդ ո՛ւր կրնայ դառնալ գտնելու խաղաղութիւն մտքի՛ եւ հանդարտութիւն սրտի : Ո՛ր, եթէ ոչ՝ այն բարեկարգ ընտանեկան յարկը, որուն սեմերէն ներս կը հրաւիրեն քեզ բազկատարած հրեշտակիկներ իրենց թոթովուն լեզուներովը : Այն նուիրական տուներէն ներս սրբապղծութիւն է բերել շուկայի եւ գործի մտառանջութիւններ : հոս պիտի մոռցուի արտաքին աշխարհն իւր բոլոր յարաբերութիւններովը : քանզի հոս կը վերափոխանան մարդուս ջլատեալ անգամները եւ ուժագրպառ կարողութիւնները :

Ընտանեաց կրտսերազոյն անգամներն են այն միջոցը, որով կ'ստանանք այս օրհնութիւնները : որովհետեւ չափանաններն ունին իրենց իսկ հոգ եւ մտառանջութիւններն եւ կամ թէ անոնց համակրութիւնն առ մեզ փորձառութեամբ այնքան վարժեցուցած է անոնց աչքերը, որ նմանիշապէս կը նշմարեն մեր դէմքին վրայ գտնուած ներքին անհանգստութիւնը եւ յաճախ մեզ յիշել կուտան զայնս, զորս մենք կը փափաքինք մոռնալ : Միայն տղաքներն որ ուրախ, զուարթ, հոգէ ազատ, մեր շուրջը կը սփռեն աշխարհի մոռացութեան միջնորդ մը : Տղաքներն են, որ երբ տուն կը վերադառնանք, մեր դէմքին վրայ կը տեսնեն ոչինչ, բայց միայն անոնց հետ գտնուելու ուրախութիւնը : Կենսատու գործիւն մը կայ այս միջնորդարին մէջ, զոր տղաքները կ'ստեղծեն : Երանի՛ այն մարդուն որ ունի այս անօրեայ փորձառութիւնը : Բայց այս երջանկութիւնը կորսուած է անոր համար որուն տանը մէջ մատաղ սրտերը դառնութեամբ կարծրացած են :

Այսպիսեղան համար իր տանը մէջ կը սպանէ իրեն աւելի մեծ դժուարութիւններ քան զորս իր ետին ձգած է : Երբ անոր զաւակները խոյս կուտան իրմէն, իրենց համարձակութիւնը կը կորսնցունեն անոր ներկայութեան : Երբ փոխանակ զրկարաց վազելով դիմաւորելու անոր ոտից ձայնը առածնուն պէս անկիւն մը կը պարուին անոր տեսութեան զերծ մնալու համար : մէկ խօսքով երբ սիրոյ տեղ ատելութիւն, յարգանքի տեղ երկիւղ կը տրեւ մատաղ սրտերուն մէջ, այսպիսի հայր մը չէ վայելած կենաց քաղցրագոյն հաճոյքը եւ զրկուած է այն կազդուրիչ սփոփանքէն զոր պզտիկներ կարող են հաղորդել :

Մ. Յ. ԳՆԱՃԵԱՆ

**ԱՆԿԼՈ-ԹՐԱՆՍԿԱԼԵԱՆ**  
**ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ**

Ահաւասիկ Սթորմպէրկի, Մակէրս-Փօնթէյնի և Գոլէնսոյի պատերազմներուն արդիւնքին վրայ Պօէր կառավարութեան հրատարակած պաշտօնագրին թարգմանութիւնը, որ վերջին սուրհանդակով Եւրոպա հասաւ :

Սթորմպէրկի պատերազմ : 10 դեկ. 99 :  
Թշնամեաց թիւը 3000 : Պօէրներունը գրեթէ 1000 :

Արդիւնք. — Թշնամիին կողմէն մեռեալ 30 հոգի, պատերազմի դաշտին վրայէն ժողուրուած. 30 վերցուածներէն զատ. առանց հաշուելու վիրաւորեալները. 672 հոգի գիւրի բռնուած որոց մէջ կը գտնուին Իկըր գնդապետը (այժմ մեռած) և 14 սպաներ, որոց 3ը վիրաւորուած էին :

Արդիւնք զատ Պօէրները ձեռք ձգեցին 3 թնդանօթ իրենց ռազմավթերքով՝ որոց երկուքը լաւ վիճակի մէջ :

Պօէրներուն կողմէն 3 մեռած. 3 ծանրապէս և 13 թեթեւօրէն վիրաւորուածներ :

Մակէրս-Փօնթէյնի ճակատամարտ 11 դեկտ. 99 :

Թշնամեաց թիւը 13—13000 : Պօէրները 5—6000, որոց մէկ մեծ մասը չ'մասնակցեցաւ պատերազմին :

Արդիւնք. — Թշնամեաց կողմէն 1300—2000 մեռած, նոյնչափ ալ վիրաւորեալ, ըստ իրենց շրջուն հիւանդանոցին մարդոցը մեր բժիշկներուն տուած տեղեկութեանցը : Մեռեալներու մէջ կը գտնուէին Հայլանտըրներու կիսաբաժնին զօրավար Վլօօփը, Վինչեսթըրի մարքիզը և ուրիշ ռազմավթի սպաներ : Գերի բռնուած 30 հոգի, մեծագոյն մասը Սկոտլանդի, նոյնպէս ձեռք ինկան շատ մը ռազմավթերը և հրացաններ :

Պօէրներուն կողմէն 60 մեռեալ և 139 վիրաւորեալ : մինակ Սքանտինալանդ գուամարտակը, թշնամիին վրայ գրոհ տուած ատեն կորսնցուց 49 մեռեալ և 21 վիրաւորեալ :

Ծանօթ. — Թշնամեաց տեղեկագրին համաձայն, իրենք ունէին 24 թնդանօթ նաւային խոշոր թնդանօթներէն զատ, որոցմով մեր գիրքերուն վրայ 4800 ռումբ տեղացուցին :

Պօէրք քիչ թնդանօթ ունէին և պատերազմին ժամանակ շատ չ'գործածեցին :

Գոլէնսոյի պատերազմ 15 դեկտ. 99 : Ապաննուած սպայից վրայ գտնուած թուղթերուն համաձայն, թշնամեաց թիւը 23000, որոց գոնէ 14,000ը պատերազմին մասնակցած քլլալով է :

Պօէրները 3000, որուն կէսը միայն մասնակցեցաւ պատերազմին՝ պաշտպանութեան գծին մեծ տարածութեանը համար :

Արդիւնք. — Թշնամեաց կողմէն, ըստ իրենց շրջուն հիւանդանոցին մարդոց տուած տեղեկութեան, պատերազմին յաջորդ օրն 3000 հոգի կոչին չ'պատասխանեցին : հաւանական է որ մեռեալ վիրաւորեալ 3300 հոգի ըլլան : Արդարեւ կորուստը շատ մեծ եղած ըլլալու է, որովհետեւ հետեւեալ օրը թշնամին Պօթա զօրավարէն 24 ժամուան զինագաղար մը խնդրեց, մեռեալները թաղելու համար :

Պօէրք բռնեցին նոյնպէս 150 գերի, որոց մէջ գեր-գնդապետ մը և շատ սպաներ կային : Բաց աստի գրաւեցին նաև 10 խոշոր թնդանօթներ, 12 ռազմավթերի սայլ, որոց մէջ 1400 ռումբ կային : Բոլորն ալ լաւ վիճակի մէջ :

Պօէրներու կողմէն 7 մեռեալ, 1 խեղդուած թիւթէլայի անցքին ժամանակ :

ԾԱՆՈԹ. Ա. — Կարմիր խաչի տեղեկութեան Դիւանին տուած ծանօթութեանց

### Հ Ե Ռ Ա Պ Ի Ր

ՓԱՐԻՉ, 28 Փետր.

Եւրոպական թերթերը կը շնորհաւորեն զժողովուրդը Քրօնտ, իւր դիւպայազնական ընդդիմութեանց համար:

Ամենուրեք ուխտեր կը կատարեն պատերազմի վախճանին համար:

ԼՈՆՏՐՈՆ, 28 Փետր.

Զօրավար Պուլլըրի և Պօէրնբերուն մէջ արիւնդուշտ ընդհարումները կը շարունակուին թիւթէլաի կիրճերուն մէջ:

Վերջին 13 օրերուն մէջ անդրկացոց կորուստը կը հասնի 2319 ի. թիւ մը՝ որ իր նախորդներուն վրայ յաւելլով, կը բարձրանայ 12,834 ի, պատերազմի սկզբնաւորութենէն ի վեր:

ԼՈՆՏՈՆ, 27 Փետր.

Զօրավար Գրօնտ, ամբողջովին պաշարուելէ վերջ, անձնատուր եղաւ: Իրեն հետ միայն երեք հազար մարդ ունի:

Գերինները Գէյթթաուն պիտի զրկուին: Անգլիոյ մէջ ուրախութիւնը խիստ մեծ է, բայց այսու հանդերձ չ'են նկատեր որ այս դէպքը վերջ դնէ պատերազմին:

ԼՈՆՏՈՆ 1 Մարտ

Զօրավար Պուլլըր կը հեռագրէ թէ, «Տրնտօնէլ իւր ասպազէն գունդերով Լէյտիսմիթհ մտած է երէկ երեկոյ:

Լէյտիսմիթհի և իմ մէջ վայրերը զերծ են թշնամիներէ, նէլթօրֆի վրայ կը քալեմ:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՔԻԱ. — Այն լուրը թէ՛ Սուլթանը իրատէ մը հանած է որով Կարսէն էրզրում երկաթուղոյ մը շինութիւնը կ'արտօնէ և Ռուսիոյ կարգ մը մենաշնորհներ կուտայ թրքական Հայաստանի մէջ, Վիէննա հրատարակող Բօլիթիջէ Գօրէսքոնցից լրագիրը կը հերքէ զայն բոլորովին:

— Սուլթանը ձրանսայի հանրապետութեան նախագահին կնոջը Տիկին Լուպէի տուաւ Շէֆաքաթի ականակուռ պատուանշանը:

— Կ. Պօլսէն կը հեռագրեն 21 փետր. թուով:

«Առևտրական դաշնագրութեանց կրնքումը յապաղումներու բաղխելուն պատճառաւ և հասոյթի նորանոր աղբիւրներ ստեղծելու համար, կառավարութիւնը մտադիր է մաքուր 0/0 8 էն 11 ի բարձրացնելը Ելած իրատէի մը համաձայն, պետա-

կան խորհուրդը հանքային օրինաց վերայ յաւելուածական յօդուած մը պատրաստեց, որով ասկէ վերջ հանքաց մենաշնորհը օսմանեան հարտակաց միայն պիտի տրուի. այս վերջինք չի պիտի կրնան օտարաց թողուլ, փոխանձել կամ վարձու տալ:

Այս յօդուածը — որ հանքային աշխարհին մէջ շփոթութիւն առաջ պիտի բերէ — վաղը նախարարաց խորհուրդին կողմէ պիտի քննուի, ուսկից վերջ Սուլթանին վաւերացմանը պիտի ենթարկուի:»

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԱՅԻԱՎԱՃԱՌՈՒՀԻՆ

ԽԱՔԵՑ ԻՐ ԱՄՈՒՍԻՆԸ

Տիկին Լապուրաս իւր ամուսնոյն հետ Օվէրնադէն Բարիզ եկաւ անուխի և վառելիքայտի առևտուրին մէջ բախտ չինելու: Տիկին Լապուրաս ծաղկահասակ, սիրուն և լեցուն կին մ'է: Բարիզի մէջ Օվէրնադէն շատ մը կին անխաղաճառներ կան, բայց քիչ կայ Տիկ. Լապուրասի չափ տենչազրգիւ Կարծես թէ ամեն սնունք որ տիկնոջ կը մօտենային տեսակ մը անօթութիւն կ'զգային և Պ. Լապուրաս բնաւ ասիկայ չէր նշմարեր: Ամէն օր «կարողութեանը» չափ կը վայելէր և չէր հաճիր նշմարել թէ իւր բարեկամները ակոյ կը կրճատէին: Ընդհ Պ. Լապուրաս իրեն պատանեցաւ ինչ որ ամուսնոյ մը կարելի է պատանիլ իբրև վատթարագոյն. խաբուեցաւ, յանդգնօրէն խաբուեցաւ, և իւր անձնասիրութեանը համար ամենէն աւելի դժուար պարագաներու մէջ:

Ստուգ է թէ այժմ անխաղաճառը լաւ մը վրէժը լուծեց և թէ դիւթիւն Տիկին Լապուրաս իւր ամուսնէն դատի քաշուեցաւ որ Փետրվար 8 էն Բարիզի պատժական դատարանին առաջ կը ներկայանար, ուր դատաւորք զինքը իւր տարիածուին հետ 100 ֆրանքի տուգանքի մը դատապարտեցին շնացողի յանձանքով. նոյնպէս ստուգ է որ անխաղաճառ Լապուրաս պիտի կարենայ, այս վճարը զինուած, քաղաքային դատարանաց առաջ ներկայանայ և ամուսնալուծուած պահանջիլ որ իրեն մէկէն պիտի տրուի. այո՛, այս բոլորը ճշմարիտ է. և հիմայ որ անխաղաճառը իւր կնոջմէն վրէժը լուծեց, բայց դատարանին մէջ գիրենք դիտող մը ամենէն աւելի արգահատանքի արժանին անխաղաճառը կը գտնէր:

Անխաղաճառուին չարամիտ մէկն է. տեսէք փետրվար 8 ի հրապարակային դատավարութիւնը շատերուն ինչ բաներ սորվեցուց. Տէր և Տիկին Լապուրաս, Սէն-Պօլսէնի կողմը փոքրիկ խանութի մը մէջ կը բնակէին ցերեկները, իսկ գիշերը, հինգերորդ յարկը կ'ելլէին ուր փոքրիկ արարթման մը ունէին. հոն կ'առնէին գործերուն խոնջէնքը:

Առաւօտ մը Տիկին Լապուրաս ըսաւ իւր ամուսնոյն.

— Ժան, վստահ եմ որ կը գողցունենք կոր. ամէն օր կը տեսնեմ թէ արցակներու հաւիւր սխալ է. ասկից զատ շատ մ'ալ պակաս թաներ կը տեսնեմ:

համաձայն, այս երեք մեծ ճակատամարտներուն մէջ Պօէրնբերուն բովանդակ կորուստը եղած է 77 մեռեալ և 210 վիրաւորեալ:

Բ. Պօէրնբերը գերի բռնած են 2500 զինուոր. ասոնցմէ զատ 84 սպայ, որոնց 4ը դեր-գնդապետ, 11ը հազարապետ, 12ը հարիւրապետ:

Գ. Անգլիացիք գերի բռնած են 390 հոգի, վիրաւորեալները և կորսուածները մէկտեղ հաշուելով:

Դ. Թշնամին առած է նաև Մօտոր-Րիվըրի ճակատամարտին ժամանակ 7 բօխիկ և 35 հիւանդապահ, հակառակ ասոնց բողոքներուն թէ Անգլիացոց ըրածը իրականց բռնարարում մըն էր և ժընէվի պայմանագրութեան հակառակ՝ որուն երկու հասարակապետութիւնները յարած էին: Ասոնք Գափ զրկուեցան և բոլոր ճամբան նախատալից վարմանց ենթակայ եղան, ինչպէս որ մէջտեղ ելաւ բօխիկներուն երգման տակ ըրած յայտարարութիւններէն: Շրջուն հիւանդանոցները նմանապէս գրաւուեցան. կրկնակի բողոքներու վրայ բօխիկները և հիւանդապահները ետ զրկուեցան, բայց շրջուն հիւանդանոցները չ'զրկուեցան:

Ե. Մակէրաֆօնթէյնի և Գօլէնսոյի պատերազմներուն ժամանակ թշնամին իր շրջուն հիւանդանոցները թնդանօթներուն առջև դրած է, զանոնք ծածկելու և պատրաստելու համար: Զօրավար Քրօնտ իւրաւամբ բողոքած ըլլալով Լորա Մէթուրնի, Լորտը անոր բողոքագրին ստացած ըլլալը յայտնած է և աւելցուցած ալ է թէ պատերազմէն յետոյ պիտի պատասխանէ:

Զ. Պօէրնբերը, այդ երեք ճակատամարտներէն յետոյ շարունակ օգնած են թշնամիին, մեռեալները թաղելու համար: Նմանապէս ամեն ցտած ատենին, թշնամիին երեսի վրայ ձգուած դիակները թաղած են:

Է. Պօէր գօմմանսօլները պաշարած են Լէյտիսմիթհի մէջ 9—13000 հոգի, Բէմպըրիի մէջ 3—4000 հոգի (օժանդակ գաֆրերէն զատ). Գորուսանի մէջ ըստ կարծեաց 600 հոգի, անգլիացիները «Պասթըրթները» և գաֆրերը հաշուելով:

Այս պաշտօնագիրը Գորուսանի անձնատրութեանէն առաջ ուղարկուած է:

### ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 2 ՄԱՐՏ 1900

6515	7012	3388	7745	4512	3535
8421	4815	4769	1682	3677	3548
7912	6277	1818	6758	6470	4788
2666	8884	325	6867	5797	3893
	4652	1734	8219		

## ԼԱ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՅԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:


Ս. ԼէՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ Գլխաւոր գործ. Ս. Ալեքսանդրիա:

# ՎԱՃԱՍՈՒՍՏՈՒՆ ԹԻՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՅԿ  
ՇՈՒՐԷ-ԱՊՏԻԻԼ-ԱԶԻԶ



Ածխանվաճառը թթին տակ կը մրմուռար՝ երբեմն ալ կը պոսար ըսելով թէ երեկոյնները պակեկու երթալէ առաջ խանութին դռները աղէկ մը կը գոցեր, եւ թէ ցերեկներն ալ բոլոր յաճախորդներուն լաւ կը հակէր:

Բեզ կ'ըսեմ որ, բարեկամս, գիշերը մենէ բնն կը գողնան՝ փոր. սինդեց Տիկ. Լապուրաս, որ կ'եւրեւի թէ շատ « յամառ » էր:

Պ. Լապուրաս կ'ըսեր թէ չ'էին գողցուներ. Տիկին Լապուրաս կը պնդեր թէ կը գողցուէին. հարկ եղաւ որ մէկուն կամքը մի սին պահանջ մանցը տեղի տայ, եւ վերջապէս համոզուելով թէ գողերը գիշերանց կը մտնէին կրպակին մէջ, Պ. Լապուրաս որոշեց բնաւ աղկից չի հեռանալ:

— Շատոնց պէտք էր որ այս որոշումն տայիր եւ մեր առուտունն ալ լաւ պիտի ընթանար, ըսաւ ածխանվաճառուին: Բաց աստի, ենթադրելով թէ գողերը չի պիտի գան զքեզ վրդովել, հոս շատ լաւ պիտի կրնաս հանգչիլ:

Եւ որովհետեւ Տիկին Լապուրաս պարկեշտ տանտիրուհի մ'էր, ամուսնոյն համար ինքեքրորդ յարկէն իջեցուց անկողին մը եւ մի քանի վերմակներ, հովի հոսանքին իբր կանխազգուշ միջոց:

Պ. Լապուրաս կ'ըսէր իրեն նկատմամբ տարած հոգը տեսնելով՝ լալու աստիճան յուզուած էր, եւ կը գիշերը կ'ընէր, ամուսնական վերջին համարոյն յետոյ, զինքը կը թողուէր տանը ինքեքրորդ յարկը առանձին ելլելու համար, ամուսինը չգուցնէր մէջ կը վերջիչեր կ'ընէր բոլոր սիրուն ձեւերը, բոլոր կատարելութիւնները, բոլոր առաքինութիւնները եւ յետոյ Պ. Լապուրաս կ'ապաստէր գողերուն ջրք բնաւ չէին գար. եւ յետոյ կը քնանար:

Ածխանվաճառ Լապուրաս տոկուն կազմուած թով մարդուկ մ'է, եւ կրնայ ի փախուստ դարձնել առ նուազն չորս մարդ. քաջութիւնը անձնաւորուած է Լապուրասի մէջ: Իժարադարար կայ բան մը — կամ աւելի ճիշդը արարած մը — անկից կ'անհանգի այս պարկեշտ ածխանվաճառը աստիճայ ալ մուկն է!:

Լապուրաս երբ մուկ մը տեսնէ, կը մարի. եւ եթէ բարեբաղդութեամբ մը չի մարի եւ իւր քով ուժ մնայ, խնդրի պէս կը փախչի Մուկընն այս վայրը անպատուիչ բան մը չէ ածխանվաճառի մը համար: Պ. տը Դիւրէն, որ ինքն ալ ալ մէկն էր, Լապուրասի պէս մուկերէն շատ կը վախնար: Գիշեր մը Լապուրաս մուկի մը այցելութիւնը ընդունեց: այդ շարածին կենդանին եկան եւ վերմակին վրայ սկսաւ ոստոստեք. ածխանվաճառը, արհաւիրքի աղաղակներով պահեց տեղէն դռնը ցատկից եւ մեծ դժուարութեամբ զէն ի փանուս թին դուռը դնաց, զոր արտորոսք մուկին վրայ գոցեց. եւ իսկոյն հինգերորդ յարկը ելաւ, խնդրի պէս կրկնելով:

— Մուկ մը. մուկ մը, մուկ մը!  
Այսպէս իւր կնոջ սենեկին դրան հասաւ, զոր տեսնող կերպով սկսաւ բաղխել:

— Բաց. չուտ, չուտ. մուկ մը կը հալածէ զիս:

Տարօրինակ բան, դուռը բնաւ չ'էր բացուեր, եւ զգալիս ածխանվաճառին այնպէս կուգար որ դրան ետեւէն աղմուկներ կը լսեր: Արդեօք կնոջը սենեկին մէջ ալ մուկեր կային:

Աւելի ուժգին դարկաւ վերջապէս զուր բացուեցաւ. աչքերը շփելով. Տիկին Լապուրաս իւր ամուսինը ընդունեց յայտնի խոժոռութեամբ մը:

— Ինձ այնպէս եկաւ որ, ըսաւ ամուսինը, անսովոր աղաղակներ լսեցի:

Եւ, կնոջը սենեկին մէջ մկանց բացակայութեան իւր ուժը վերստանալով, անկողնոյն տակը նայել փորձեց: Նախ սրունգ մը երևան հանեց, որուն ներկայութիւնը այդ տեղը գէթ աղմուկին չափ անսովոր էր: Սրունգը քաշեց, սրունգին ծայրը երևան ելաւ սիրահարը: Սիրահարը այն տեսակի վիճակի մը մէջ էր որ Տիկին Լապուրաս հաւանականաբար չ'էր կրնար իւր ամուսնոյն կլլեցնել տալ իբրեւ իւր սպասած գողը. եւ, ինչպէս վերը ըսի, փետր. 8 ին տեղի կ'ունենար այս դատը պատժական դատարանին առաջ: Պ. Լապուրաս դատը չահեցաւ, երկու մեղաւորներէն իւրաքանչիւրը 100 ական ֆրանք տուգանքի են իւրկել տուաւ, եւ առանձին թողուց դատարանը ու մեկնեցաւ:

Թէյի գործածութեան ընդհանրանալով թէյի ճաշակն եւ նրբացած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատեւ և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քսանամեայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր Չինաստանի, Ճապոնի, Մեքսիկոյի և Հնդկաստանի գլխաւոր նրբագործներէն, որոցմէ արդէն հասած է մեզ ինչպէս նաև ձեռնուսն եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնտիր հոտաւետութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉՊՖԱՍՆՅ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամատչելի են:

Թէ Կ. Պօլսոյ և գալապոսք և թէ օտար երկիրներու մէջ վեր տան ցոյց տրուած վստահութիւնն կը քաջալերէ մեզ, զգուսել ևս յարկէ մեր սկզբունքին, որ է:

Ուղղամտութիւն Թէյերու օճեակի, կօլուի և գնց մտքին:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեզի եղած ԿԱՆԻԻԿ դրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

21 — 50

## ՏՕՐՓԻՐ ԺՕՐՁ Փ. ԷՎԼԻԵԱՆ

Ամերիկեան Առամեքոյձ  
Ապրիլ Եւրկ Բուլարի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բեղաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակուաններ:

Կը դադրեցնէ վայրկենապէս ակուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած դեղերովն:

Կը բուժէ լինտերիս և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուանքուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամէն օր կէսօրէ և տք ժամը 3—5:

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԿԻՆԻԱՆ

## ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՒ

### ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ

Օռօգտի Պաժ վաճառուսան մօտերը Պամե-Է-Պեմպի հիւս դիմացը

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ իրենց փութին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխօրդարա պլուրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ թեան փութին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի թէյի և կաթի պաքսիմաթներ և այլն:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին: 34—50

## ԿՈՊԷՐ ՊԷՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՐԷ ԵՒ ՆԱՐՉԱՏՈՒՑ

Տանկերի տարիներ շարունակ կարեւոր ըլլաւ սանկարչատուններով մէջ աշխատելով արհեստին ամեն ճիւղերը լաւ ճշակած նա իր փորձառութիւնն սաացած է:

Պօլսոյ մէջ Ապտիլլահ եղբարց տան ինչպէս եւ որի մի քանի ծանօթ տունկարչաբաղաքիս մէջ վերջին պնջալ է քեզեան գործատան մէջ ամենա կարեւոր պաշտօնը վարած, արժեք առանձին գործատեղի՝ որ կը հիմնէ եզպէրի Կարիա Դամմէլ Սթիլ ՇէֆֆըՍՍԻ ձեռք դրանց թիւ 3 արարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և զուրար կառկներ ի հարկին: Ակրանխարման բնական մեծութեամբ: Կենդանագիրներ ամերիկեան մեքենայով, որոնք երբէք չեն աւրուիր:

Գուհաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միեմաքիւր:

Բազաներկ և ջրաներկ պատկերներ, եւլն:

Լուսանկարի և պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուրբու, սեկիւրբում եւլն:

Իրեն զիմող յաճախորդներն հանդէ տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է:

Դիմեցէ՛ք և կատարելագոյն գործ պիտի մնաք:

## ՓԱՓԿԱԿԵՐԱՑ ԱԶՔԸ ԼՈՅՍ

ԼՕՐԱՆՓԱՃԻ ՕՆՆԻԿ

Որ Կ. Պօլսոյ Բերայի Հալիպ Զարբսիին մէջ ընտիր խմորեղէններ պատրաստելով հոշակ հանած է, այս անգամ Ապտիլի Պահակապոստի դիմացի անկիւնը խանութ բացած է և կը պատրաստէ ցեւակ տեղակ համեմատ քաղցրուէնք. խմորեղէնք ամենամարուր և ընտիր իւղով:

Հոն զիմող յաճախորդներէն իւրաքանչիւրը իրենց ճաշակին համեմատ գոհացում պիտի գտնեն:

Հարստիչներու երկկայներու և հրապարակներու համար ոյէտք եղած անուշեղէն—խմորեղէնները կը պատրաստէ գոհացնելու պայմանաւ և դիւրամատչելի գներով: